ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
АССОЦИАЦИЯ БУХГАЛТЕРОВ И АУДИТОРОВ АРМЕНИИ
ASSOCIATION OF ACCOUNTANTS AND AUDITORS OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/3, 6-րդ հարկ, /ՀՀԱԱ գործունեության գրասենյակ/
Հեռ.: 010 24-91-78; 077 24-91-78; 010 23-71-02; E-mail: aaaa@aaaa.am

Մ/Ա Ե - 38
22.08.2018թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

պարոն ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պողոսյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի օգոստոսի 7-ի N 02/3-1/14261-18-ի նամակի, ինչպես նաև 2018թ. օգոստոսի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարությունում՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքների նոր նախագծերի քննարկման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության, կից ներկայացնում եմ «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կարծիքը՝ օրենքների նոր նախագծերի վերաբերյալ:

Միաժամանակ, Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի անդամների առաջարկով, խնդրում եմ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի նախավերջին նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասից (օրենքի նոր նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասից) հանել երկրորդ նախադասությունը («Աուդիտի և հարակից ծառայությունների փաստաթղթավորումը պարտադիր իրականացվում է հայերեն լեզվով՝ բացառությամբ աուդիտի անցկացման նպատակով աուդիտորի կողմից ձեռք բերվող այն փաստաթղթերի, որոնք ի սկզբանե պատրաստված են եղել օտար լեզվով»): Նշված պահանջը անհաղթահարելի դժվարություններ կառաջացնի աուդիտորական ծառայություններ մատուցելիս:

Հարգանքներով՝

ՀՀԱԱ նախագահ Հովհաննես Պետրոսյան

ՀՀ, ք.Երևան, Կ. Ուլնեցու 31; Ереван, ул. К. Улнеци, 31; Yerevan, K. Ulnetsi str. 31
/Իրավաբանական հասցե և "Հաշվապահական հաշվառում և աուդիտ" ամսագրի խմբագրություն/
Հեռ. Тел.Tel. (37410) 24-16-63

Կարծիք

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքների նոր նախագծերի վերաբերյալ

1. Ներածություն

1.1. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների մասին», «Աուդիտորական գործունեության մարմնի մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքների փաթեթի նախագիծ) մշակումը սկսվել է 2013 թվականին՝ Համաշխարհային բանկի կողմից ներգրավված մասնագետների խմբի կողմից: Խմբում ներգրավված էին արտասահմանյան (Մեծ Բրիտանիայից) և տեղական մասնագետներ: Օրենքների փաթեթի նախագծի մշակումը ավարտվեց 2014 թվականին: Օրենքների փաթեթի նախագիծը փորձաքննության ենթարկվեց Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի (CFRR) փորձագետների կողմից և ստացավ դրական գնահատական: 2014 թվականի նոյեմբերին օրենքների փաթեթի նախագիծը Համաշխարհային բանկի կողմից պաշտոնապես ներկայացվեց ՀՀ ֆինանսների նախարարությանը:

1.2. Օրենքների վերը նշված փաթեթի նախագծերի համաձայն հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման գործառույթները պետք է իրականացներ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների մասին» օրենքի համաձայն ստեղծվող Հայաստանի Հանրապետության հաշվապահների և աուդիտորների Պալատը (այսուհետ՝ Պալատ), որը հանդիսանալու էր ինքնակարգավորվող կազմակերպություն: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում չկա ինքնակարգավորվող կազմակեր-պությունների մասին օրենք, հետևաբար Պալատի հասկացությունը, ձևավորման կարգը, կառավարման և հատուկ մարմինները, դրանց գործունեության կարգը, ինչպես նաև Պալատի խնդիրները և գործառույթները, իրավունքները և պարտավորությունները և Պալատին առնչվող այլ կարևոր հարցեր ամրագրվեցին օրենքում:

1.3. 2017 թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարության կողմից արձանագրային որոշմամբ ընդունվեց «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական

գործունեության հայեցակարգ», որտեղ ամրագրված դրույթները համահունչ էին օրենքների փաթեթում ներկայացված դրույթներին:

1.4. Մինչև 2018թ. ապրիլը օրենքների փաթեթի նախագիծը մի շարք անգամներ քննարկվել է շահագրգիռ մասնագետների մասնակցությամբ, որոնց արդյունքում համապատասխան հստակեցումներ են կատարվել օրենքների փաթեթի նախագծում: 2018 թվականի ապրիլի վերջի դրությամբ առկա օրենքների փաթեթի նախագծում (այսուհետ՝ օրենքների փաթեթի նախավերջին նախագիծ)՝

- հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում ***քաղաքականություն իրականացնող մարմինը***՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
- հաշվապահական հաշվառման ***կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինը*** Պալատն է, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների, ... համար կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը և Պալատը՝ համատեղ,
- Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ***կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինը*** Պալատն է:

1.5. 2017 թվականի հուլիսին ՀՀ ֆինանսների նախարարության և «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՀԱԱ) միջև կնքվել է հուշագիր, համաձայն որի.

«Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և «Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն (այսուհետ՝ ՀՀԱԱ) **հավաստում են**, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների հայեցակարգին հավանություն տալու դեպքում՝ համապատասխան օրենքի ընդունման պարագայում, ՀՀԱԱ համաձայն է վերակազմակերպվել Հայաստանի հաշվապահների և աուդիտորների պալատի»:

2. Առանցքային փոփոխությունը

2.1. Օրենքների փաթեթի լրամշակված նախագծից հանված է «Պալատ» հասկացությունը և այն դրույթները, որոնք վերաբերում էին Պալատի կողմի հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում կարգավորման գործառույթների իրականացմանը:

2018թ. օգոստոսի 20-ին ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպված քննարկման ժամանակ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից օրենքների

փաթեթի նախագծի վերը նշված փոփոխությունները հիմնականում հիմնավորվում էին հետևյալ կերպ.

- ընդունելի չէ, որ Պալատը ստեղծվում է ՀՀԱԱ վերակազմակերպման միջոցով,
- ընդունելի չէ, որ Պալատը լինի միակը, որը իրականացնելու է օրենքների փաթեթով նախատեսված գործառույթներ: Ցանկալի է, որ լինեն մեկից ավելի մասնագիտացված կառույցներ, որպեսզի այդ կառույցների միջև լինի մրցակցություն, ինչն էլ կբարձացնի այդ կառույցների միջոցով իրականացվող գործառույթների որակը:

2.2. Վերը նշված հիմնավորումների հետ կապված ՀՀԱԱ ունի հետևյալ դիրքորոշումը՝

- ՀՀԱԱ-ն դեմ չէ, որ Պալատը ստեղծվի «զրոյից», այլ ոչ թե ՀՀԱԱ վերակազմակերպման միջոցով: Վերակազմակերպման միջոցով Պալատի ստեղծման միակ նպատակը այն էր, որ ՀՀԱԱ-ն հանդիսանում է Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) թղթակից անդամ, և ցանկալի չէ, որ կորսվի այդ անդամակցությունը: IFAC-ին ՀՀԱԱ-ի անդամակցության գործընթացը տևել է մոտավորապես երեք տարի, որոնց ընթացքում ուսումնասիրվել է, մասնավորապես, ՀՀԱԱ-ի որակավորման համակարգը և այդ համակարգի համապատասխանությունը IFAC-ի կրթական տանդարտներին, ինչպես նաև այլ գործառույթները և դրանց համապատասխանությունը համապատասխան ստանդարտներին: IFAC-ը իրականացնում է ՀՀԱԱ-ի բոլոր գործառույթների մշտական մոնիտորինգ, որի արդյունքում ՀՀԱԱ-ն պարտադրված է մշտապես բարելավել գործառույթները՝ միջազգային ստանդարտներին համապատասխանելու համար: Ի թիվս այլ պահանջների, IFAC-ի անդամ դառնալու համար անհրաժեշտ է, որ IFAC-ի մեկ այլ անդամ կառույց իրականացնի հատուկ ուսումնասիրություն (աուդիտ) և տրամադրի դրական երաշխավորություն, ինչն ակնհայտորեն ժամանակատար և ծախսատար գործընթաց է.
- մեկից ավելի մասնագիտացված կառույցների ստեղծումը չի հանգեցնի մրցակցության հետևանքով այդ կառույցների կողմից իրականացվող գործառույթների որակի բարձրացմանը, այլ կարող է տալ հակառակ արդյունք: Մասնավորապես, այն մասնագիտացված կառույցը, որը, օրինակ՝ մասնագիտական որակավորման, մասնագիտական կազմակերպության անդամների կողմից մատուցվող ծառայությունների որակի վերահսկման պահանջների պահպանման նկատմամբ կսահմանի ավելի նվազ պահանջներ, աուդիտորական կազմակերպությունները, աուդիտորները և փորձագետ հաշվապահները կձգտեն անդամակցել նման «նվազ պահանջներ» սահմանած մասնագիտական կառույցին.
- մեկից ավելի մասնագիտացված կառույցների ստեղծումն ըստ էության նշանակում է Հայաստանի նման փոքր երկրում առանց այն էլ սուղ միջոցների փոշիացում, ինչը կհանգեցնի նրան, որ մասնագիտացված կառույց(ներ)ը չի

(չեն) կարողանա արդյունավետ կատարել իրենց գործառույթները: Բացի այդ, IFAC-ի քաղաքականությունն է, որ փոքր երկրներից միայն մեկ մասնագիտացված կառույց կարող է անդամակցել IFAC-ին:

Միաժամանակ, օրենքների փաթեթի նոր նախագծով նախատեսված է, որ մասնագիտացված կառույցը հասարակական կազմակերպություն է: Միջազգային պրակտիկայում նման կազմակերպությունները ինքնակարգավորվող կազմակերպություններ են: Ինքնակարգավորվող կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետությունում օրենսդրություն ձևավորված չէ: Նշված բացը կարգավորվել է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմինների մասին» օրենքի նախավերջին նախագծում ներառված 2-րդ «Պալատ», 3-րդ «Պալատին անդամակցությունը, անդամակցության դադարեցումը և Պալատի ռեեստրի վարումը», 4-րդ «Պալատի մարմինները, կանոնադրությունը, և այլ կարգավորումներ», 5-րդ «Պալատի անդամների գործունեության գնահատումը և կարգապահական պատասխանատվության միջոցները» գլուխների համաձայն: Հետևաբար, հասարակակական կազմակերպության իրավական կարգավիճակը, ինչպիսին ներկայումս հանդիսանում է ՀՀԱԱ-ն, մասնագիտացված կառուցի համար բավարար չէ և լուրջ խնդիրներ կարող է առաջացնել: Մենք գտնում ենք, որ առավել արդյունավետ կարգավորում իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, մասնագիտացված կառույցը պետք է ավելի բարձր կարգավիճակ ունենա, քան պարզապես հասարակական կազմակերպությունն է, և «Պալատ»-ը դիտում ենք որպես ուղղակիորեն օրենքով նախատեսված յուրահատուկ ձևի ոչ առևտրային կազմակերպություն՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի:

3. Կարծիք

3.1. Հաշվի առնելով վերը շարադրվածը, ՀՀԱԱ-ն գտնում է, որ մասնագիտորեն լավագույն մոտեցումը օրենքների փաթեթի ***նախավերջին*** նախագծին (այն նախագիծը, որում ներկայացված է Պալատը) ընթացք տալն է: ՀՀԱԱ-ն պատրաստ է մասնակցելու ՀՀ կառավարությունում, ՀՀ Ազգային ժողովում օրենքների փաթեթի նախագծի քննարկմանը, եթե նման հնարավորություն ՀՀԱԱ-ին ընձեռնվի: